ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«08» հուլիսի 2016թ.

գ.Նորակերտ

թիվ 111

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի պատասխան Ձեր 2016 թվականի հունիսի 23-ի թիվ 01/02.1/2054-16 պաշտոնական գրության Նորակերտի համայնքապետարանը ներկայացնում է Նորակերտ համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման վերաբերյալ կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն:

Առդիր 1 թերթ:

Համայնքի ղեկավար Շ.Կարապետյան

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը սահմանված ժամկետում օրենքով սահմանված կարգով ավագանու հաստատմանը կներկայացնի ամենամյա գույքագրման փաստաթղթերը:
2. Այսուհետ համայնքի ավագանու նիստի օրակարգը և որոշման նախագծերի նախապատրաստումը կիրականացվի <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով սահմանված ժամկետների պահպանմամբ:
3. <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան այսուհետ Նորակերտ համայնքի ավագանու կողմից կստեղծվեն մշտական հանձնաժողովներ և ավագանու անդամները կանդամակցեն այդ հանձնաժողովներին: